«ՊԱՐՈՆՏԷՐ» ԿՈՉՈՒՄԸ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՈՒՇՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՏԱՊԱՆԱԳՐԵՐՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. Է.

Վիմական արձանագրություններում, ի մասնավորի՝ տապանագրերում, արհեստներ, կոչումներ և տարաբնույթ մասնագիտություններ բնորոշող բազմաթիվ եզրույթներ են պահպանվել. դրանց համակողմանի քննությունն էական նշանակություն ունի հատկապես միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային ոլորտները, ինչպես նաև հոգևոր ու աշխարհիկ կյանքը լուսաբանելու առումով: Այս տեսանկյունից էլ կարելի է բացատրել մեր անդրադարձը՝ վիմագրերում երբեմն հանդիպող «պարոնտէր» կոչմանը, որը կփորձենք քննել Ս. Էջմիածնի և Ս. Հռիփսիմե վանքերի միաբանական գերեզմանոցներում հիշյալ եզրույթն ամրագրող տապանագրերի միջոցով[1] (Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցից՝ վեց, Ս. Հռիփսիմեի վանքից՝ երկու հիշատակություն):

Ստ. Մալխասյանցը «պարոնտէր» տերմինը բացատրում է իբրև «ազնուական ծագումից կալուածատէր, մելիքին ստորադրեալ փոքր մելիք», իսկ երկրորդ իմաստով՝ «յարգական տիտղոս՝ պարոն կամ տէր նշանակութեամբ»[2]: Բացատրության վերջին տարբերակը տեղ է գտել նաև միջին հայերենի բառարանում[3]:

Միջնադարյան Հայաստանում ձևավորված պարոնտէրության ինստիտուտին ուսումնասիրողներն անդրադարձել են տարբեր առիթներով: Ակադ. Լ. Խաչիկյանը, «պարոնտէր» կոչումը համարելով սոցիալական նոր տերմին, այն դիտարկել է իբրև հայ ավատատերերին հատկացվող միջոց, որով նրանք «…շարունակում են իրենց ձեռքում պահել իրենց հայրենական կալվածքները, լինելով միաժամանակ և՛ «պարոն» (այսինքն՝ աշխարհիկ իշխան), և՛ «տէր» (այսինքն՝ հոգևոր առաջնորդ)»[4]: Հիշյալ տեսակետը հետագայում զարգացրել է պրոֆ. Է. Բաղդասարյանը, ըստ որի՝ Հայ եկեղեցու և Կիլիկյան հայկական թագավորության վերաբերմունքը «պարոնտէրության»

---

[1] *Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի տապանագրերը (նաև «պարոնտէր» տերմինի հիշատակմամբ) տեղ են գտել Գևորգյան հոգևոր ճեմարանի սան Արարատ սարկավագ Գափոյանի (Տեր Ղևոնդ) ավարտաճառում, սակայն առանց ծանոթագրությունների: Վերծանություններում Ա. Գափոյանը «պարոնտէր» կոչումը կարդում է անջատ՝ «պարոն տէր»:* **Արարատ սրկ. Գափոյան,** *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատան արձանագրությունների վերծանություն, (ավարտաճառ), Ս. Էջմիածին, 1998, էջ 109, 111, 112, 115, 117:*

[2] *Հայերէն բացատրական բառարան, կազմեց՝* ***Ստ. Մալխասեանց****, հ. չորրորդ, Ե., 1945, էջ 86:*

[3] **Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.,** *Միջին հայերենի բառարան, Ե., 2009, էջ 649:*

[4] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, կազմեց՝* ***Խաչիկյան Լ.****, Ե., 1958, էջ LXIV:*

նկատմամբ ընկալվում է իբրև «յուրօրինակ դաշինք հայ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միջև և միջոց է՝ ստեղծված պայմաններում ինչ-որ չափով պահպանելու հայ ավատատիրության իրավունքները»[5]: Աշխարհիկ ավատատերերը, չկարողանալով պահպանել իրենց տիրույթները, «…ընդունում էին հոգևոր աստիճան և տիրույթներն էլ ձևականորեն եկեղեցուն նվիրում: Մինչդեռ իրականում այդ տիրույթների հետ վարվում էին նախկին ավատատիրական իրավունքով»[6]: Համանման տեսակետ ունի նաև տ. Շահե քահանա Հայրապետյանը[7], իսկ աստվածաբան Հ. Հակոբյանը, ի հավելումն վերոնշյալի, առաջ է քաշում այն միտքը, թե ԺԳ-ԺԵ դդ. վիմական նվիրագրերում առկա «միաբանել» բառի հաճախադեպ լինելը պայմանավորված է հիշյալ շրջանում պարոնտէրության ինստիտուտի առաջացմամբ: Որոշ վիմագրերի վկայակոչմամբ՝ նա ընդգծում է հատկապես պարոնտէրության երևույթի ու «միաբանել» արտահայտության միջև առկա կապը, կարծելով, որ հիշյալ եզրույթի հաճախակի կիրառումը «…վկայում է «պարոնտէրության» ինստիտուտի ավելի զարգացած փուլ թևակոխելու մասին, ու այս համատեքստում «միաբանվող»-ներին կարելի է համարել միջանկյալ մի փուլի ներկայացուցիչ՝ դեպի պարոնտէրություն գնացող»[8]:

Ընդհանրացնելով նշենք, որ պարոնտէրությունը նախ պետք է դիտարկել իբրև յուրօրինակ «համակարգ», որը ներառել ու միավորել է երկրի աշխարհիկ և հոգևոր իշխանությունները, ապա շահեկան միջոց՝ ավատատիրության իրավունքները որոշակիորեն պահպանելու համար:

Պարոնտէրության ինստիտուտի ծագումն ու զարգացումը ԺԱ-ԺԴ դարերում վերջերս առավել մանրամասն քննության է ենթարկել Վ. Թորոսյանը: Վկայակոչելով նախորդներին՝ նա նշում է, որ այն «…ձևավորվեց ու զարգացավ անկախ, կենտրոնաձիգ պետականության բացակայության պայմաններում: Դա էր պատճառը, որ այն Կիլիկյան Հայաստանում չունեցավ այնպիսի դրսևորում, ինչպես բուն Հայաստանում»[9]: Հիմնականում վիմագրերում հանդիպող «պատրոն»[10], «պարոն»,

---

[5] **Բաղդասարյան Է.,** *Ակնարկ Հայոց եկեղեցու և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների (Հայոց եկեղեցի և պետություն» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2000, էջ 102-103):*

[6] **Ներսես Շնորհալի**, *Թուղթ ընդհանրական, աշխատասիրությամբ՝* ***Է. Մ. Բաղդասարյանի****, Ե., 1995, էջ 25:*

[7] **Տեր Շահե քահ. Հայրապետյան**, *1441 թվականին կաթողիկոսական աթոռի փոխադրումը Վաղարշապատ՝ որպես Հայոց պետականության վերահաստատման պատմական նախապայման, «Հայոց եկեղեցի և պետություն» միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 130-131:*

[8] **Հակոբյան Հ.,** *«Աշխարհիկ միաբանների» ինստիտուտը միջնադարյան Հայաստանում (Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, 2014, թիվ 2 (143), էջ 27):*

[9] **Թորոսյան Վ. Հ.,** *Պարոնտէրության ինստիտուտի ձևավորումն ու զարգացումը Հայաստանում (XI-XIV դդ.) (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2011, թիվ 1-2 (630), էջ 31):*

«պարոնություն» արտահայտությունները, ըստ Վ. Թորոսյանի, հատկանշում են «…աշխարհիկ իշխանությունների տիրական իրավունքները ոչ միայն իրենց կալվածքների, այլև դրանցում առկա հոգևոր հաստատությունների նկատմամբ»[11]: Այսինքն՝ իշխանական տիրույթներում գտնվող վանքերն ու եկեղեցիներ, անցնելով իրենց իսկ հովանավորության ներքո, աշխարհիկ իշխաններին հնարավորություն էին ընձեռում նաև միջամտելու եկեղեցու ներքին գործերին և ծառայեցնելու իրենց շահերին: Հատկանշելի է նաև այն, որ եկեղեցին ավատատիրական հարաբերություններից որդեգրել էր իշխանության ժառանգական կարգը, այսինքն՝ հոգևոր առաջնորդի պաշտոնում հաճախ կարող էր հանդես գալ աշխարհիկ տան ներկայացուցիչը:

Պարոնտէրությանը բնորոշ եկեղեցական պաշտոնների ժառանգաբար փոխանցումը մեզանում դրսևորված է եղել ավելի վաղ, որի վերաբերյալ կանոնական որոշումներում արգելող դրույթ կա. «Զի ոչ պարտ է եպիսկոպոսին՝ եղբաւր կամ որդւոյ կամ այլում ազգականի շնորհել զպատիւ եպիսկոպոսութեան, որպէս ինքն կամի ձեռնադրել, քանզի ժառանգաւոր եպիսկոպոսութեան իւրոյ առնել՝ չէ իրաւացի, զԱստուծոյն շնորհել մարդկային սիրոյ: Քանզի եւ ոչ զեկեղեցին Քրիստոսի ժառանգաւորութեամբ արժան է դնել: Ապա թէ ոք արասցէ զայս՝ անհաստատ լիցի ձեռնադրութիւն նորա եւ ինքն որոշեսցի»[12]:

Վերոհիշյալ դիտարկումներն ընդունելով իբրև նախաբան՝ նախ վկայակոչենք Վաղարշապատում գտնվող «պարոնտէր» տերմինի հիշատակմամբ տապանագրերը, որից հետո ծավալվենք մեր կողմից առաջ քաշվող տեսակետի քննության շուրջ: Ինչպես վերը նշվեց, հիշատակություններից վեցը պահպանվել են Ս. Էջմիածնի Մայր տաճարից մոտ 150 մ հարավ-արևելք գտնվող միաբանական գերեզմանոցի տապանագրերում.

ՏԱՊԱՆԱՔԱՐ. օրորոցաձև, գիրը՝ հարավային նիստին, 3 տող.



[10]**Գրիգորյան Գ.,** *Պատրոն տերմինը միջնադարյան հայ աղբյուրներում (Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Ե., 2005):*

[11] **Թորոսյան Վ. Հ.,** *նշվ. աշխ., էջ 33:*

[12] *Կանոնագիրք հայոց, հ. Ա, աշխատասիրությամբ՝* ***Վ. Հակոբյանի****, Ե., 1964, էջ 94, կանոն* ***ՃԴ (ՃԳ) Հ.:***

ԱՅՍ Է Տ(Ա(ՊԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԻ, Ի ՔԱՂԱՔԷՆ, ՈՐ ՇՕՇ ԿՈՉԻ/ ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆՏԷՐ ՎԵՐԱՁԱՅՆԻ, ԼՈՒՍԱՐԱՐ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ/ ՎԱՂՋԱՆԵՑԱՒ Ի ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՋԱՐ ՀԱՐԻՒՐ Ք(Ա(Ռ(Ա(Ս(ՈՒ(Ն Դ. (4) ԻՆ (1695):

Ծագումով Շոշ (Նոր Ջուղա, Սպահան) քաղաքից Հակոբը չափածո տապանագրում հիշատակվում է և՛ պարոնտէր, և՛ լուսարար Ս. Էջմիածնի: Նշենք, որ լուսարարները եկեղեցու պաշտոնյա էին, որոնք հսկում էին եկե-ղեցու ներքին բարեզարդությունը, լուսավորությունը, զգեստավորումը և այլն[13]:

Տապանագիրը հստակ ընդգծում է այն, որ Հակոբ պարոնտէրը աշխարհիկ տան ներկայացուցիչ է, որը հավանաբար հոգևոր իշխանության է հասել պաշտոնի ժա-ռանգաբար փոխանցմամբ: Այս դեպքում պատկերն առավել որոշակի է դառնում, քանի որ մենք գործ ունենք ուշմիջնադարյան տապանագրի հետ, մինչդեռ պարոնտէրության ինստիտուտը ձևավորվել ու զարգացել էր ավելի վաղ (ԺԱ դար):

ՏԱՊԱՆԱՔԱՐ. հարթ ուղղանկյունաձև, գիրը՝ 7 տող.



(Շ(ՆՈՐՀՕՔՆ ԱՅ, ԱՅՍ Է/ ՏԱՊԱՆ ՆՈՐՔԸՅԻ/ ԳԱՍՊԱՐ ՊԱՐՈՆՏԷ/ՐԻՆ, ՈՐ Է ԵՂԲԱՅՐ/ ՆԵՐՍԷՍ ՊԱՐՈՆՏԷՐԻ,/ ՎԱՂՃԱՆԵՑԱՒ ԹՎ(Ի(Ն/ ՌՃԾԸ. (1709), ՄԱՅԻՍ ԻԳ. (23):

---

[13] *Հայերէն բացատրական բառարան, կազմեց՝ **Մտ. Մալխասեանց**, հ. երկրորդ, Ե., 1944, էջ 215:*

Տապանագիրը, որում երկիցս հիշատակված է «պարոնտէր» կոչումը, Ս. Հռիփսիմե վանքի գերեզմանոցում է: Ընջեցյալը ծագումով նորքեցի Գասպար պարոնտէրն է, որը դարձյալ պարոնտէր Ներսեսի եղբայրն է: Հիշյալ տապանագրի բովանդակությունը ևս հավաստում է, որ պարոնտէրությունը կրել է ժառանգական բնույթ, և «պարոնտէր» կարող էին կոչվել միևնույն ընտաիքի կամ տան զավակները (ինչպես տապանագրում է)՝ կոչումը ժառանգելով հորից:

ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցաձև, վրան առկա է սլաքաձև խորշ, գիրը՝ արևմտյան նիստին՝ 5 տող, և արտաքին մասում՝ միատող, ելնդագիր.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԶՈՒՂ(Ա(Յ/ԵՅԻ ԹՕՐՈՍ ՊԱՐ(ՈՆ(ՏԻՐԻՆ,/ ՍԱ ՓՈԽԵՅ(Ա(Ի ԱՌ ՅԻՒՐ/ ԲԱՂՁ(Ա(Լ(Ի(Ն, ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ/ ՏՈՒՔ ԶՈՂՈՐՄԻՆ/ ՌՃԿԱ. (1712) ԹՎ(ԻՆ(:

«Պարտիր» եզրույթը, որն ըստ էության բնորոշում է Թորոս Զուղայեցու պաշտոնը կամ կոչումը, պայմանականորեն վերծանել ենք «պարոնտէր»՝ կարծելով, որ տապանագիրը հիշյալ եզրույթի ևս մի վկայությունն է: Չնայած սրան՝ թուրք-հայերեն բառարանում հանդիպում է «պարտատ» բառեզրը, որ նշանակում է դռնապան, սենեկապետ[14]: Այս դեպքում տեղին կլիներ «պարտիր» անվան տակ հասկանալ Թորոս Զուղայեցու պաշտոնը՝ դռնապան:

[14] *Համառօտ բառարան ի տաճկականէ ի հայ, ի պէտս դպրոցաց յօրինեալ ի Հ. Յակովբոս վ. Պօղաճեան, հ. երկրորդ, Վիեննա, 1841, էջ 765:*

ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցաձև, գիրը՝ արևմտյան նիստին, 5 տող.





ԱՅՍ Է ՏԱՊԱՆ/ ԼՈՒՍԱՐԱՐ ՄԱՐՏ/ԻՐՈՍ ՊԱՐՈՆ/Տ(Է(ՐԻՆ, ՌՃ/ԿԹ. (1720) ԻՆ:

Նշյալ տապանագրում ևս ակնհայտ է հանգուցյալի՝ աշխարհիկ ու հոգևոր իշխանության երբեմնի ժառանգորդ լինելու փաստը:

ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցաձև, գիրը՝ արևմտյան նիստին, 5 տող.



(Ա(ՅՍ Է ՏԱՊԱՆ ԷՐԷ/ՎԱՆՑԻ ԵՐԵՄԻԱ ԱԲԱ/ ՄԻԱԲՆԱԿ ՊԱՐՈՆՏ(Է(ՐԻՆ,
ՈՐ/ ՎԱՂՋ(Ա(ՆԵՑԱ(Ի(ՌՃՁ/Զ. (1737) ԹՎԻՆ:

Երևանցի Երեմիա պարոնտէրը տապանագրում հիշատակվում է նաև «աբա միաբնակ»: Աբբա (հուն. abbā - հայր) էին կոչվում կաթոլիկ եկեղեցու վանահայրերը[15], իսկ «միաբնակը» բնորոշում է Երեմիայի՝ Հայոց եկեղեցուն հատուկ Քրիստոսի մեջ մի բնության դավանումը[16], այսինքն՝ աբբան այստեղ զուտ «հայր, վանահայր» իմաստն ունի, որի կիրառությունն ըստ էության կաթոլիկ և առաքելական եկեղեցիների փոխկապվածության հետևանք է:

---

[15] *Հայերէն բացատրական բառարան, կազմեց՝* ***Ստ. Մալխասեանց****, հ. առաջին, Ե., 1944, էջ 1: Տե՛ս նաև* **Հր. Աճառյան,** *Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Ե., 1971, էջ 73:*

[16] *Հայերէն բացատրական բառարան, կազմեց՝* ***Ստ. Մալխասեանց****, հ. երրորդ, Ե.,1944, էջ 321:*

ՏԱՊԱՆԱՔԱՐ. հարթ ուղղանկյունաձև, գիրը՝ 6 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ/ ԴԱՄԲԱՐԱՆԻ ՍԲ / ԱԴՈՌԻՍ ԼՈՒՍԱՐ/ԱՐԻ, ՈՐ Է
ԴԱՎԻԹ/ ՊԱՐՈՆՏ(Է(ՐԻ, ՌՃ/ՂԵ. (1746) ԹՎԻՆ:

Ս. Էջմիածնի լուսարարի պաշտոնը զբաղեցնող Դավիթը ևս կրում է «պարոնտէր» կոչումը: Այս հանգամանքը հատկանշելի է, քանի որ ննջեցյալը տապանագրում հիշատակվում է միաժամանակ և՛ պարոնտէր, և՛ լուսարար, այսինքն՝ նա «տէր» է, հոգևորական, տվյալ դեպքում՝ լուսարար, իսկ «պարոն»՝ ըստ ամենայնի իբրև աշխարհիկ տան ժառանգորդ լինելու համար:

ՏԱՊԱՆԱՔԱՐ. հարթ ուղղանկյունաձև, կենտրոնում վարդապետական գավազանն է, գիրը՝ 2 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՐԿՈՍ ՊԱՐՈՆՏԷՐԻՆ,/ ՈՐ Է ՈՐԴԻ ՄԱՐ(Տ(ԻՐՈՍԻՆ:

Հավանական է, որ Մարկոս պարոնտէրը վերոնշյալ տապանագրում հիշատակած Ս. Էջմիածնի լուսարար Մարտիրոս պարոնտէրի որդին է, այսինքն՝ արոնտէրության ժառանգաբար փոխանցումը ավելի քան իրատեսական է դառնում:

Վկայակոչելով Վաղարշապատի վանական գերեզմանոցներում «պարոն-տէր» տերմինի հիշատակմամբ ուշմիջնադարյան տապանագրերը, նկատենք, որ այս առումով ուշագրավ են նաև Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանում և հատկապես Ղուկաս Ա Կարնեցի (1780-1799) կաթողիկոսի նամակներում և տարաբնույթ գրագրություններում՝ Էջմիածնի հարկատու ծառաների (ճորտերի) մասին պահպանված վկայությունները: Հիմնականում արխիվային նյութի հիման վրա հիշյալ երևույթին համառոտ անդրադարձել է պատմաբան Վ. Գրիգորյանը՝ Ղուկաս Կարնեցու գրագրությունների մի մասը գիտական շրջանառության մեջ դնելով: Նա նշում է, որ դիվանական վավերագրերում Էջմիածնի ճորտերի վերաբերյալ հարուստ նյութ կա, ինչը չի դարձել հատուկ քննարկման առարկա[17]:

Պարզվում է՝ ԺԸ դարավերջին Մայր Աթոռը մեծ թվով ճորտեր ուներ Վրաստանում՝ պայմանավորված հիշյալ երկրի սոցիալ-տնտեսական պայ-մաններով[18]: Ըստ պատմաբան Բենիամին Հարությունյանի՝ աթոռապատկան ճորտերն ուղղակի հողին կցված ճորտեր չէին, այլ հատուկ ծառաներ, որոնք որոշակի քանակի հարկ էին տալիս վանքին: Վանքն էլ իր հերթին իրավունք ուներ նրանց վաճառելու, նվիրաբերելու կամ ազատ արձակելու[19]: Բ. Հարությունյանի կարծիքով. «большинство этих «ճորտ»–ов по-видимому, были бывшие пленные, которые были выкуплены или самим Эчимадзином, или же частными лицами, а потом подаренные ими же Эчмиадзину»[20]:

Սիմեոն Ա Երևանցի (1763-1780) կաթողիկոսը «Ջամբռ»-ում վանքապատկան ճոր-տերին կոչում է հարկատու ծառաներ: Դեռևս Աստվածատուր Ա Համադանցի (1715-1725) կաթողիկոսի ժամանակներից Թիֆլիսից ընտանիքներ են «գնվել»՝ Սուրբ Աթոռին իբրև հարկատու ծառա լինելու համար[21]: Ինչպես երևում է «Ջամբռ»-ում ներ-կայացված հարկատու ծառաների անվանացանկից, նրանց մեծ մասը եղել են հմուտ արհեստավորներ, առևտրականներ, անգամ՝ հոգևորականներ, որոնք Էջմիածնին մեծարժեք նվերներ են տվել. «Այլեւ Սուրբ Աթոռի հարկատու ծառաներ (ճորտեր) են

---

[17] Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հ. Ա, աշխատասիրությամբ՝ **Վ. Գրիգորյանի**, Ե., 1984, էջ 74:

[18] Նույն տեղում:

[19] **Арутюнян Б. М.** *Крупное монастырское хозяйство в Армении в XVII-XVIII вв., по архивным материалам Эчмиадзинского монастыря (историко-экономическое исследование), Е., 1940, с. 93-94.*

[20] Նույն տեղում, էջ 94:

[21] **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, *Ջամբռ, Ե., 2003, էջ 288:*

կլայեկչի (անագագործ) Բաղդասարը, քոհենց Բաղդասարի թոռ Բաղդասարը, դաբաղ (կաշեգործ) մահտեսի Դավթի որդի Հովհաննեսը, խելթուփնեցի տեր Դավիթը, խելթուփնեցի Ավթանդիլը եւ իր որդի Աբրահամը...»[22]: Ուշագրավն այն է, որ նրանց թվում հիշատակվում է նաև հոգևորական տեր Դավիթը:

Վ. Գրիգորյանը նկատում է, որ «ճորտերի մեջ կային հմուտ արհեստավորներ և հաջողակ վաճառականներ, որոնք էջմիածնին մեծարժեք նվերներ էին տալիս: Այդ է պատճառը, որ նրանցից ոմանց Ղուկաս կաթողիկոսն իր նամակներում մեծարում է «պարոն» տիտղոսով»[23]: Այս երևույթն արձա-նագրում է նաև պատմաբան Հ. Թորոսյանը, ըստ որի՝ «կասկած լինել չի կարող, որ «պարոն» տիտղոսով մեծարվող անձնավորությունները առանձ-նանում են մնացած ճորտերից իրենց կարողություններով ու հեղինակության աստիճանով»[24]: Դատելով մատենագրական աղբյուրներից, ըստ նրա, ծառա-աղախին-սպասավորների դասին պատկանողներն իրավունք են ունեցել, փրկագին վճարելով, ազատվելու հարկադիր աշխատանքից, որից, փաստորեն, չեն օգտվել անգամ «պարոն» ճորտերը, քանի որ ճորտ լինելու հանգամանքը նրանց համար հուսալի պատնեշ էր և «...հնարավորություն էր տալիս նույնիսկ արտոնյալ իրավունք ձեռք բերելու հարկային պարտավորությունների բնագավառում»[25]: Հայտնի է, որ էջմիածնի ճորտ լինելը ձեռնտու է եղել, քանի որ ըստ վրաց թագավորի հրամանագրի՝ նրանք ազատված էին հարկային պարտականություններից և վճարում էին միայն Մայր Աթոռին: Հիշյալ հանգամանքն էլ խթանում էր ճորտերի քանակը կամավորներով համալրվելուն[26]:

Ղուկաս կաթողիկոսի նամակներում ևս նկատելի է, որ ճորտերը հիմնականում արհեստավորներ և առևտրականներ էին և սակավ դեպքերում նաև՝ հոգևորականներ: Նամակներից մեկի խորագրում կարդում ենք Թիֆլիսի Ջգրաշեն եկեղեցու երեցփոխան պարոն Հովհաննեսի անունը, որը հիշվում է իբրև Սուրբ Աթոռի ճորտ. «Թուղթ օրհնութեան եւս առ սրբոյ Աթոռոյս ճորտ եւ Ջկրաշէնու եկեղեցւոյ երիցփոխան պարոն Յովաննէսն, ի պատասխանի նորին թղթոյն, որում օրհնութիւն եւ սէր վասն սիրոյն եւ հարազատութեանն որ առ սուրբ Աթոռս...»[27]: Մեկ այլ վավերագրում էլ հիշատակվում են Ավթանդիլ և Նիկողայոս «պարոնները», որոնք Մայր Աթոռին ճորտ են ընծայում. «Թուղթ առ պարոն Ասթանդիլն եւ պարոն Նիկողայոսն, որք հանդերձ այլովք ընտանեօք իւրեանց ընծայեալ էին սրբոյ Աթոռոյս զճորտ մի Շաքարօ անուամբ՝ որդի Յոհաննիսի ումեմն շամախեցւոյ...»[28]:

---

[22] *Նույն տեղում:*

[23] *Դիվան հայոց պատմության, էջ 75:*

[24] **Թորոսյան Հ.,** *Էջմիածնի վանական տնտեսությունը XV-XVIII դարերում, Ե., 2007, էջ 127:*

[25] *Նույն տեղում, էջ 127-128:*

[26] *Դիվան հայոց պատմության, էջ 75:*

[27] *Նույն տեղում, էջ 156, վավ. 257:*

[28] *Նույն տեղում, էջ 156, վավ. 258:*

Այն, որ վավերագրերից մի քանիսում էջմիածնապատկան ճորտերը կամ հարկատու ծառաներն աչքի են ընկել արհեստի կամ առևտրի բնագավառում, և այն, որ նրանցից ոմանք նաև հոգևոր ծառայության մեջ էին, հիմք են տալիս ենթադրելու, որ Վաղարշապատի վանական գերեզմանոցների ԺԷ-ԺԸ դդ. տապանագրերում հիշատակված պարոնտէրերը կարող էին պարզապես Մայր Աթոռին հարկատու հոգևորականներ լինել, որոնք, հմուտ լինելով որևէ արհեստում, մեծարվել են «պարոն» տիտղոսով և «տէր» հոգևորական լինելու համար:

Խնդրո առարկա եզրույթը քանիցս հիշատակված է նաև ԺԵ դարի ձեռագրերի հիշատակարաններում, որոնցից մի քանիսը հարկ ենք համարում ստորև վկայակոչել.

ՄՄ Հմր 4435՝ Սանահնի վանքում գրված «Աւետարան» ձեռագրի գրչության հիշատակարանում կարդում ենք պարոն-տէր Հովհաննեսի անունը. «...յիշեցէք ի Քրիստոս զստացաւղ տառիս զարժանապատիւ կուսակրօն քահանայն Մաթէոս... եւ զսնընդակից զբստ հոգւոյ հարազատք նորին զսրբասէր քահանայսն **զպարոն-տէր Յովանէս** եւ զմեծ Յովանէս եւ զտէր Սարգիս, եւ զԳրիգոր եւ այլ միաբանեալսն սիրով ընդ նմա յիշեցէք ի Քրիստոս»[29]:

ՄՄ Հմր 6268 «Յայսմաւուրք» ձեռագրի հիշատակարաններում երկիցս վկայված է պարոնտէր Տ. Ստեփանոս արքեպիսկոպոսի անունը. «Քրիստոս Աստուած... ողորմեա ամենայն հաւատացելոց... նաեւ **պարոնտիրին տէր Ստեփանոս արքեպիսկոպոսին** որ առաջնորդ եղեւ գրոցս եւ գթայր ի վերայ մեր որպէս հայր ի վերայ սիրելի որդոյ...»[30]:

Եղեգիսում՝ 1495 թ. գրված «Աւետարան» ձեռագրի գրչության հիշատակարանում կարդում ենք. «Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականիս Հայոց ՋԽԴ (1495). ի կաթողիկոսութեանն տեառն Սարգսի՝ յաթոռ սուրբ Էջմիածնի եւ վերադիտող այսմ նահանգի **պարոն-տէր Եղիշա արքեպիսկոպոսի** որդոյ իշխանաց իշխանի պարոն Սմպա[տայ], որդոյ մեծին Տա[ր]սա-իճի...»[31] (ընդգծումները մերն են - Ա. Հ.):

Նկատենք, որ նշված հիշատակարաններում «պարոնտէր» կոչումը կրողները ևս հոգևորականներ են (Հովհաննես քահանա, Ստեփանոս և Եղիշա արքեպիսկոպոսներ), որոնք հավանաբար այն ստացել են կա՛մ ժառանգաբար, կա՛մ աշխարհիկ իշխանական տան ներկայացուցիչներ են, որ ունեն նաև հոգևոր իշխանություն, այսինքն՝ հիշյալ ժամանակաշրջանի համար ասել, թե նրանք ևս կարող են վանքին հարկատու ծառաներ կամ ճորտեր լինել, անհիմն է:

ԺԷ դարի մատենագրության մեջ ևս հանդիպում է «պարոնտէր» կոչումը: ՄՄ Հմր 4059 «Աւետարան» ձեռագրի հետագայի ստացողներ են հիշվում դարձյալ հոգևորա-

---

[29] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Ե., 1955, էջ 316:

[30] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, էջ 358:

[31] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Ե., 1967, էջ 213:

կաններ տեր Հովհաննես քահանա պարոնտէրը և նրա որդի Թադոս պարոնտէրը: Ձեռագրի ԺԷ դարի հիշատակարանում այդ մասին կարդում ենք հետևյալը. «Վերջին ստացող սուրբ Աւետարանիս պատուական եւ աղաւթասէր, հեզահոգի եւ բարէմիտ քահանայն Յովհաննէս, եւ որդին իւր՝ պարոնտէր Թադոսն, որ ետուն նորոգել սուրբ Աւետարանս... Դարձեալ յիշեցէք պարոնտէր Յովհաննէս, եւ զկենակիցն իւր՝ Կոգեալն, եւ զորդին իւրեանց՝ տէր Թադոսն...»[32]:

«Պարոնտէր» կոչումը հիշատակված է նաև Նոր Գետիկի կամ Գոշավանքի Ս. Գևորգ եռախորան եկեղեցու արևմտյան մուտքի դիմաց գտնվող տապանաքարին. «ԱՅՍ Է / Հ⌊Ա⌋(ՆԳԻՍ⌊Տ⌋ՄԿՐ/ՏԻՉՊ⌊Ա⌋Ր/ՈՆՏ⌊Է⌋Ր/ԻՆ, ԹՎ⌊ԻՆ⌋ Ռ/ՃԻԴ (1675)»[33]:

Ամփոփելով «պարոնտէր» տերմինի՝ ուշ միջնադարում ունեցած իմաստային և կիրառական նշանակությանը վերաբերող մեր համառոտ ակնարկը, հանգում ենք հետևյալին.

- *«Պարոնտէր» կոչումը ԺԱ–ԺԴ դդ. ձևավորված պարոնտէրության ինստիտուտի անմիջական ծնունդն է, որը կրում էին այդ «ինստիտուտը» ստեղծած անձինք ու նրանց ժառանգները: Այսինքն՝ ուշ միջնադարում հիշատակված պարոնտէրերը տվյալ կոչումը կարող էին կրել զուտ պարոնտէրի ժառանգ լինելու պատճառով՝ անկախ իրենց դիրքից, սոցիալական վիճակից ու զբաղեցրած պաշտոնից:*

Հաշվի առնելով այն, որ Հայ եկեղեցին ավատատիրական հարաբերություններից որդեգրել էր նաև իշխանության ժառանգական կարգը, ապա ավելի քան հավանական է, որ վկայակոչված տապանագրերում հիշատակված պարոնտէրերը աշխարհիկ տների ներկայացուցիչների կամ նախկին ավատատերերի ժառանգորդներն էին:

- *Պարոնտէրության ինստիտուտն ստեղծվեց ու զարգացավ անկախ պետականության բացակայության պայմաններում. այն դարձավ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունները միավորող «համակարգ»,միաժամանակ նաև միջոց՝ ավատատիրության իրավունքները հնարավորինս անխախտ պահելու համար:*

- *Արխիվային վավերագրերում պահպանված տեղեկությունները նկատի առնելով՝ հավանական ենք համարում մի կարևոր հանգամանք ևս. Վաղարշապատի միաբանական գերեզմանոցների ուշմիջնադարյան տապանագրերում հիշատակված պարոնտէրերը կարող էին պարզապես Մայր Աթոռին հարկատու հոգևորականները լինել, որոնք «պարոն» տիտղոսին են արժանացել որևէ արհեստում կամ վաճառականության մեջ ամուր դիրք գրավելու, իսկ «տէր»՝ միաժամանակ հոգևոր ծառայության մեջ լինելու համար:*

---

[32] *ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, կազմեցին՝* ***Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան****, Ե., 1974, էջ 50:*

[33] *Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Իջևանի շրջան, կազմեցին՝* ***Ս. Ա. Ավագյան, Հ. Մ. Ջանփոլադյան****, Ե., 1977, էջ 102, արձ. 226:*

ТИТУЛ “ПАРОНТЕР” В ПОЗДНЕСРЕДНЕВЕКОВЫХ ЭПИТАФИЯХ ВАГАРШАПАТА

АРУТЮНЯН А. Э.

Резюме

Из позднесредневековых надгробных эпитафий до нас дошли многие понятия, обозначающие ремесла, звания и различные профессии. В их числе – титул “паронтер”, нередко встречающийся в эпиграфике и упоминаемый также в надгробных надписях монастырского кладбища Вагаршапата.

Исследователи (Л. Хачикян, Э. Багдасарян, В. Торосян и др.) по разным поводам обращались к вопросу возникновения и развития (11-14 вв.) института паронтерства. Возникнув в условиях отсутствия независимого государства, он представлял собой наилучший способ сохранения феодально-имущественного права путем объединения светской и церковной власти. Армянская церковь переняла законы наследования, принятые в феодальном обществе. Исходя из этого, не исключено, что упоминаемые в период позднего средневековья “паронтер”-ы являлись представителями светских семей или наследниками бывших феодалов.

Архивные данные позволяют выдвинуть еще одну гипотезу, согласно которой паронтеры, упомянутые в позднесредневековых эпитафиях Вагаршапата, могли быть просто священнослужителями, являющимися крепостными или налогоплательщиками патриаршего престола, удостоив-шимися звания “парон” (господин) благодаря своему социальному положению, а звания “тер” (святой отец)–благодаря служению церкви.

THE TITLE OF “PARONTER” IN THE LATE MEDIEVAL EPITAPHS OF VAGHARSHAPAT

A. HARUTYUNYAN

Abstract

Many terms have reached our times from inscriptions on the gravestones from Late Middle Ages that characterize the crafts, titles and various professions. One of such titles, “paronter” sometimes appears in epigraphic inscriptions. It is repeatedly referenced in the epitaphs of the monastic cemetery of Vagharshapat. Researchers (L. Khachikyan, E. Baghdasaryan, V. Torosyan and others) approached the matter of formation and development of the “paronter” institution (11-14 centuries) on different occasions.

The institution, created during the absence of the independent state, was the best way to defend feudal property rights through unifying of secular and religious authorities. The Armenian church had adopted the hereditary order from feudal relations, and it cannot be excepted that “paronters” mentioned in the Late Middle Ages were representatives of secular houses or inheritors of former feudals.

Based on the information preserved in an archive document, another hypothesis can be put forward: “Paronters”, who are mentioned in the epitaphs of Vagharshapat can be just clergymen who were serfs or tax payers of St. Etchmiadzin Monastery. They were awarded the title of “paron” (sir), probably, for their social position and the title “ter” (holy father) – for the service at church.